

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՔԱԼԻՖՈՐՆՈՅ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԵՏ



ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային կապի յաճնախումբը նախաձեռնել է հանդիպումների շարք ունենալ գաղութումս գործող միութիւնների հետ եւ մեր համայնքին ներկայացնել այդ միութիւնների պատմական անցեալն ու ներկայիս ծրագրերն ու գործունէութեան դաշտը:



Որպէս առաջին իրագործումն այդ նախաձեռնութեան, Հանրային կապի յաճնախմբի ատենապետ՝ Բաֆֆի Կիրիւնեանը, յանձնախմբի անդամ՝ Անդրանիկ Աբրահամեանը եւ գրասենեակի պատասխանատու՝ Սարո Նազարեանը Երկուշաբթի, Յունիսի 13-ի երեկոյեան ժամը 7:30-ին այցելեցին Գլենդէլում գործող Քալիֆորնոյ Հայ Երիտասարդաց Միութիւն, ուր հանդիպում ունեցան միութեան վարչութեան անդամների հետ, ծանօթանալով միութեան անցեալի եւ ներկայիս աշխատանքների հետ:

Միութիւնը հիմնուել է 1991 թուականի Օգոստոսի 10-ին՝ լստանջելոսարնակ մի խումբ իրաքահայեր ՀՄԸՄ-ականների համատեղ ջանքերով, հիմնականում նպատակ ունենալով ծաւալել մշակութային եւ հասարակական գործունէութիւն՝ հայապահպանմանը նպաստելու համար: Միութիւնն ունի Գլենդէլ պողոտայում գտնուող իր յարմարաւետ, ուրոյն կենտրոնատեղին, որը ծառայում է միութեանականներին 1996 թուականից ի վեր:

Հիմնադրումից ի վեր, միութիւնը աշխոյժ աշխատանք է տարել իր անդամների թուի բազմացնելման ուղղութեամբ, որի արդիւնքում միութիւնն այսօր իր շուրջն է համախմբել տարբեր տարիքի շուրջ 400 անդամներ, որոնց թւում՝ տարեցներ, երիտասարդներ ու պատանիներ: Ամէն Կիրակի, 5-16 տարեկան երեխաներ ներկայանալով միութեան կենտրոնատեղի, մասանակցում են իրենց համար կազմակերպուած երաժշտական, երգչախմբային եւ պարային ծրագրերի եւ ունենում են իրենց ամենամեայ ելոյթները: Նրանց համար կազմակալում են նաեւ այցելութիւններ ու գիտապտոյտներ՝ շրջանիս թանգարաններում եւ տեսարժան վայրերում:

Միութեան բազմաբնոյթ ծրագրերը իրագործում են վարչութեանն ենթակայ յաճնախմբերի ջանքերով, որոնց թւում յատկանշելի են տիկնանց, մանկապատանեկան, երիտասարդական,

գրական, ընկերային, շինարարական, յարաբերական յանձնախմբերի աշխոյժ գործունէութիւնը: Նկատի ունենալով, որ միութեան անդամների մեծամասնութիւնը իրաքահայեր են, միութեան անդամները պարբերաբար մարդասիրական օգնութիւն են կատարում Իրաքում ապրող հայութեանը, որը ներկայումս գտնուում է անմխիթար իրավիճակում:

2001 թուականին միութիւնը յատուկ հանդիսութեամբ նշել է իր հիմնադրման 10-ամեակը եւ հրատարակել 100 էջանոց նկարազարդ յուշամատեան, ուր տեղ են գտել միութեան տասը տարիների իրագործումները: Յուշամատեանում վարչութիւնը դրուասանքով է անդրադարձել միութեան անդամների անսակարկ նուիրումին, տասմանեայ ձեռքբերումներին եւ աւելացրել. «Մնորոյ առարկայ չէ միայն մեր մշակոյթին պահպանումը որպէս ազգային մեծագոյն հարստութիւն: Այլեւ բոլորին զբաղեցուցած է այդ մշակոյթի զարգացումը՝ որ ջանք թափուած է միշտ բարձր պահելու՝ փոխադրելով սերունդէ սերունդ մինչեւ հեռաւոր ասփերը այս հիւրընկալ երկրին: Յարաճուն գործունէութեամբ կարելի պիտի ըլլայ ստեղծել միութենական կեանքի աւելի մեծ մթնոլորտ մը, ջերմացնող կլիմայով մը ներշնչել մեր անդամներուն ստեղծագործութիւնները, որ տաղանդը առիթ ունենայ փայլատակելու եւ մենք վայելենք ճաշակաւոր ու աւելի վաւերական համախմբութիւն: Թող միշտ վառ մնայ մեր մշակոյթին ջահը յաւերժական կրակով, որ տեղափոխած է պանդուխտ հայը երկրէ երկիր, նոյնիսկ իր տառապանքի ճամբուն վրայ, որ հասած ու բերած է իր վերջին հանգրուաններէն մէկուն՝ Քալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան»:

Միութեան մէջ գործուն աշխատանք է տանում «Կոմիտաս» երգչախումբը հանրաձանօթ խմբավար՝ Կոմիտաս Քեշիշեանի ղեկավարութեամբ: Երգչախմբին մասնակցում են շուրջ 48 միութենականներ, ովքեր անցնող երեք տարիներին հանդէս են եկել երգչախմբային երկու համերգներով:

Մշակութային եռանդուն աշխատանք է տանում նաեւ միութեան գրական յանձնախումբը կազմակերպելով թէ՛ ներմիութենական եւ թէ՛ հրապարակային միջոցառումներ նուիրուած ինչպէս հայրենի, այնպէս էլ սփիւռքահայ մշակութային գործիչների, գրականագէտների, գրողների, կեանքին ու գործունէութեանը: Սոյն միջոցառումներին հրաւիրում եւ ելոյթ են ունենում համալսարանների դասախօսներ եւ մտաւորականներ:

Լոս անջելոսում գործող հայրենակցական միւս կազմակերպութիւնների ու միութիւնների նման, Քալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութիւնը մաս է կազմում Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման Կալիֆորնիայի միացեալ մարմնին, որը կազմակերպում է համագաղութային միջոցառումներ Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման եւ համահայկական բնոյթի այլ իրադարձութիւնների առիթով:

Քալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան աշխատանքների մասին տեղեկութիւններն ու մանրամասնութիւնները պարբերաբար լոյս են տեսնում միութեան «Լրատու» վեցամսեայ պարբերաթերթում:

Այս լուրը տրամադրում է
237 Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467